

## ՍՈՒՐԲ ԼԵԶՈՒ

### Դ. ԱՂԱՅԵԱՆՅԻ

Ներկայումս մեր կրաւորական բալը գրում են հին դ տեսակ աղ-  
ղագրութեամբ, ինչպէս.

ա. ուում, ուււլ...

բ. վում, ուււլ...

գ. ւում, ուււլ...

դ. վում, վււլ...

ե. ւում, ւււլ...

Լաւ չի լինիլ արդեօք, որ այս դանաղան չափարար ունեցող կոտո-  
րակները մի ընդհանուր չափարարի վերածենք լեզւի հնչական և պատմա-  
կան ուղղագրութեան օրէնքով: Այդ զանազան չափարարներն են՝ վ, ու, ւ,  
խնդիրը, ինչպէս տեսնում էք, ալդ երեք գրերին է վերաբերում. պէտք է  
հետադատել և իմացել ալդ երեք գրերի մէջ եղած հնչական տարբերու-  
թիւնը և որը ուղիղ դատելի, այն ընդունելի միայն:

Նախ և առաջ տեսնենք ինչպէս են հասկացել ալդ բանը մեղանից  
առաջ, և երեքից որն են ընդունել աշխարհիկ լեզուով գրելիս: Ասում եմ  
աշխարհիկ լեզուով, որովհետեւ մեր կրաւորականը՝ իբրեւ աշխարհիկ լեզւի  
սեփականութիւն, պարտաւոր ենք արնպէս գրել, ինչպէս սովորաբար  
գրում ենք մի որ և է բարբառով, երբ ուղում ենք հաւատարիմ մնալ Նորո  
հնչիւնաբանական և քերականական օրէնքներին:

Արարատեան բարբառի համար ունինք անմահ Վէրք Հալաստանին,  
որի մէջ հանճարաւոր հեղինակը կրաւորական բալըրը բոլոր ժամանակնե-  
րում գրել է վնով—վում, ված, վիւ, վող, ալ և տված, տարվալ, տվեց,  
օսմանցիվ, լվանալ, որից երևում է, որ հաւատարիմ է մնացել բարբառի  
արտաբերութեանը, ալապէս չէր գրիլ մինչև անգամ կարթալ, քթալ,  
խիւեց, քցած, հաքեւ, և ալն:

Արտիեանցի պէս է վարել և Ալիբեյդեանեան քան «Վէրք Հալաս-  
տանի» լոյս տեսնելը: Նա Սալաթ-Նօւլալի վրացական տառերով գրած եր-

գերը հալերէնի վերածելիս լալտնի տեղերում գրել է վն, և ահա թէ ինչ է ասում ինքն ադ մասին: «Թիֆլիզցու խօսելուն, ևս կարդալուն լաւ ա կանջ դնելով՝ երբէք չը կարողացաւ զանազանել և և վառակրու տարբեր արտասանելն. էնդուր էլ սրանց ձէնն նշանագրելու գործ ևմ գրել վ տառն»: Աբովեանի և Ախվերդեանի պէս է վարել և Ս. Սարգսեանը իւր «Աղուկեցոց բարբառ»-ի մէջ, ուր ոչ միայն բարբառի կրաւորականներուն է վն գրել, ալ իւր բուն գրական լեզւի մէջ ևս և այն էլ ոչ միայն կրաւորականներում, ալ և հաւաած, լոռած և ալ սրանց նման բառերի մէջ գրել է ված: Մեր Նոր կտակարանի առաջին աշխարհիկ թարգմանութեան մէջ ևս կրաւորական բալի բոլոր ժամանակներում վն է տպագրւած: Այսպէս և շատ մասնաւոր գրքեր:

Այս ընդհանուր ուղղութիւնից շեղել է միայն Պ. Պռօշեանցը իւր «Սօս և Վարդիթերի» մէջ: Տաղանդաւոր պատանին ազգասիրաբար հաւատարիմ չի մնացել աշտարակցոց արտաբերութեանը, սխալ համարելով, և շատ բաներ աղաւաղել է, որով ուզեցել է մօտենալ գրաբառի ուղղագրութեանը և ցոյց տալ, որ իւր հալրենակիցները գրաբառի ուղղագրութեամբն են խօսում: Նոյն իսկ կրաւորականներում գրել է ու ու, փոխանակ իւր միւս վարժապետի հետևութեամբ գրելու վում, վն, և ալն:

Ղարաբաղի բարբառում, ուր հաստ հնչիւնները ամեն տեղից աւելի հաստ են հնչում, իսկ բարակն ամենից նուրբ, չունի բայական և լ վերջաւորութիւն, ալ՝ էլ, ալ, իլ, ջ՝ունի ևմ, ես, է, ալ՝ ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն: Սովորականից էն լալն արտաբերելով՝ ասում են—տանէլ, տանւէլ, խօսէլ, խօսւէլ, մնալ, մնալ (մնացել), քերնալ (գնացել), ճրւիլ, պիւրիլ, խարջիլ, կերւիլ, քերիլ, սերիլ, մսւում, մսււէլ, մսււած, մսււող, տըւած, տըւող, տըւալ (տւել) <sup>1)</sup> մսււալ, պիւրւալ, մղւալ, մնղւալ, դնղւալ, և ալն:

Այս բառերը Աբովեանը կը գրէր վնով, Պռօշեանցը ոււով, իսկ Ախվերդեանը կարող էր գրել և լիւնով, ըստ որում, ինչպէս ինքն ասում է, վնի և լիւնի մէջ հնչական տարբերութիւն չի գտել: Նւ չիրաւի, միակերպ կը կարդացւին, և թէ գրենք հաւատ և համատ, հաւ և հաւ, կաւիճ և կաւվիճ, կաւ և կավ, հոգւոր և հոգեվոր, զօրաւոր և զօրավոր, տարաւ և տարավ, բարն և բարիւ, տիւ և տիվ, կոււ և կուվ, պատիւ և պատիվ և ալն, որ ասել է և և վ նոյնահնչիւն գրելու հնչ, մինչդեռ ուն սրանցից տարբեր ձալն է և տառ, և կարող չէ գրւել ալն տեղերում, որ թէ վն և թէ լիւն կարելի էր գրել, օրինակ՝ չենք կարող գրիլ հաուատ, հաու, թէպէտ գուցէ մի՛ ժամանակ, բեւեռագրութեան դարբնում կ'ամ էլ առաջ,

<sup>1)</sup> Գրաբար—տըւեալ, լըւեալ, լըւեալ, երդըւեալ... ցըւեալ, կըւեալ հաշւեալ:

հալք՝ հաւ ասելու տեղ՝ ասել են հառւ: Մենք հիւս նախաջրհեղեղեան հա-  
լիւրի համար չենք դրում, այլ ժամանակակից:

Համեմատական լեզուագիտութեան մագիստրոս Տօմսօնը Թիֆլիսի  
բարբառի հետազոտութեան մէջ ասում է. վեր և լիւնի մէջ պէտք է որ  
հնչական դանաղանութիւն լինի, բայց թէ որպիսի, մենք հնար չ'ունե-  
ցանք իմանալու, այս պատճառով էլ ամեն տեղ, ուր միայն լիւն էր  
դրւած, դրեցինք ռուսական Յ: Պարոն Տօմսօնը կրաւորականներում չի  
գրել Յ, այլ մի թաւանշան ռուսական ջ, որին ինքն ասում է ПЕСЛОГОВОЙ  
ջ. այսինքն՝ անվանկ կամ կիսաձայնաւոր ու Այս ուղղագրութիւնը թէև  
աւելի լիւնին է մօտենում քան թէ վերին և ուրիշ, ապու ամենապիւ աւ-  
հիմն է և սխալ, եթէ այսպիսի մի բան լինէր մեր լեզւի մէջ. ալդ պէտք  
էր փոխել աւելի Ախալցխայի բարբառում, ուր մի և նոյն Տօմսօնը՝ պ.  
Մախրասեանի օգնութեամբ՝ գրել է Յ, և ոչ թաւանշան ջ: Եթէ Ախալ-  
ցըխացոյց բարբառումը չը կալ, Թիֆլիսի բարբառումն ամենին չը պէտք  
է լինի և ահա ինչու: Ախմերզեանը (որի կազմակերպւած և հաստատ լսո-  
ղութեանը աւելի պէտք է հաւատալ, քան թէ մի աշակերտի <sup>1)</sup>), որ ղեռ-  
դտնում է սևմիշարական լեզւի աղղեցութեան տակ) ահա թէ ինչ է ասում.  
«Վրոց լեզուի ուղղագրութենով բառերում պատահած ու վանկի տեղ գրել  
եմ վ կամ ը, էս վանկն, որն որ ձայնաւոր տառերու առջև պատահէլիս՝  
վրոց լեզուի առողանութեան կանոնովն ու մէ քանի դաւառներում ճիշտ  
պահած աւանդութենով հնչվում է մէկ ն ուրբ՝ Հալոց լեզուին սեփական  
ձէնով, Թիֆլիզեցին արտաբերում է որպէս վ կամ ը. էնդուր էլ չեմ  
գրում պատահական, լեղւի, տաւած և ալն, բայց պատվական, լեղվի,  
տրված»...

Ախմերզեանի այստեղ վիշած ուրի նրբութիւնը, ոչ այլ ինչ է՝ եթէ  
ոչ այն, որ արևելեան բարբառներում ըւ եղածը, արևմտեան բարբառ-  
ներումն է ուլ, բոլորովին այնպէս, ինչպէս ուրիշ տեղերում եղած ևչը  
Թիֆլիսի բարբառումն է ևիչ, կամ մէկ բարբառի ուն միւս բար-  
բառում օ է կամ օւ: Սրինակ մենք ասում ենք տաւ կամ տըւց,  
նոր նախիջևանցիք ասում են տուլեց, Բայց այս տարբերութիւնը կրա-  
ւորականների վերայ չի տարածում. չեն ասում տրուլեց, ասուլեց,  
բայց լուլեց, չուլեց, կարուլեց, գիրադուլեց, Մենք կարդում ենք  
նըւէր, նըւաղ, նըւաստ, իսկ պօլսեցիք կարդում են նուվաղ,  
նուլէր, նուվաստ, իսկ կրաւորականները միակերպ ենք արտասա-  
նում: Եթէ բալերի արտաբերութեան մէջ տարբերութիւն լինէր մեր  
և նրանց մէջ, տաղանդաւոր Պարոնեանը կրաւորականները վնով  
չէր գրել, այլ նա միւսների պէս կը գրէր ու: Զը նայած, որ նրանք կար-

<sup>1)</sup> Այս պարոնը Վաղբերդի աշխատակից Դ. Աստուածատրեանն է, որի օգնու-  
թեամբն է գրել Տօմսօնը Թիֆլիսի բարբառի հետազոտութիւնը:

դուժ եմ նուժազ, նուժաստ, բայց վանկեկիս և բանաստեղծութիւնների մէջ  
գրուժ եմ նըւազ, նըւաստ, նըւէր, տըւաւ, տըւած, տըւութիւն:

## Բ.

Վերը բերած պատմական համառօտ տեսութիւնը նորա համար  
արինք, որ ցոյց տանք թէ բարբառով գրողները կրաւորական լալի բոլոր  
ժամանակներում գրել են վե և ոչ ու կամ ու, բայառութեամբ Պ. Պո-  
շեանցի, որ գրել է ուեւ և ուոււ...

Բայց հիմա գանք օրէնքով ու կանոնով խօսենք և ոչ անհատական  
դեմքով: Պոշեանցը, թէև բացառութիւն է կազմում, բայց հակասական  
ուղղագրութեամբ չի գրել, այլ ինչպէս միւսները բալի բոլոր ժամանակ-  
ներում գրել են վե, նա էլ՝ դարձեալ բալի բոլոր ժամանակ-  
ներում՝ գրել է ու: Սխալ է թէ ուղիղ, այդ պէս ինքիւր է, բայց մարդը  
չի հակասել ինքն իրան: Աւարդարեւ, եթէ բալի վերջաւորութիւնն է ում,  
եւ, ած, օղ, եղ, և ալլ, ապա ինչ գիր որ դնես այդ վերջաւորութիւննե-  
րից մէկնումէկի սկզբում նրան կրաւորական շինելու համար, նոյն գիրը  
պէտք է դնես ամենի սկզբումն էլ. այստեղ բացառութեան տեղիք չը կա:  
Ասել՝ մէկ ուն էլի տանելի է, իսկ ջուխտ ուն՝ անճոռնի, ուստի լաւ է  
գրել վում կամ ում, իսկ մնացածներում դնել ու, այդ կը նշանակէ ու-  
նատակ տալ լեզուի օրէնքն ու կանոնը և հետեւել ինքնահնար և քմահաճ  
կանոնի, որ ամենալն լեզուից մերժելի է: Կամ ասել՝ մեր լեզուի մէջ մի և  
նոյն ձալնաւորը կրկնակ չի գործածուում, այդ թերասածութիւն է. միւր  
լեզուի մէջ ոչ թէ մի և նոյն ձալնաւորը կրկնակ չի գործածուում, այլ առ-  
հասարակ երկու պարզ ձալնաւոր իրար մօտ չեն դալիս առանց միջնա-  
կապի: Այսպէս են վարւել մեր նախնիք ալն օտար բառերի վերարկու-  
թեամբ ևս, որոնք չեն ունեցել ոչինչ յօդակապ, սլլ կրկու ձալնաւորներ  
իրար մօտ են եղած, իրանց ազգապին անտարբերութեան համեմատ. օրի-  
նակ չեն գրել օա, որովհետև հալն աղպէս բառ չունի իւր լեզուում, աղ-  
պէս հնչելու սովորութիւն չունի, սլլ պէտք է ասէ օւա, կամ ովա, օլա  
կամ ոլա, կարող չէ ասել աօ, սլլ աւօ կամ ալո, և ոչ էօ, օէ, աա, օօ,  
ուու: ()րինակ գրել են Տրովադա, որ է Տրօադա, Շմաօն, փարաօն, Ղե-  
ւոնդ, Մենելաօս, Դանաօս, Աբրահամ, Դէհաներա: Միջնակապը բաց են  
թողել միայն ալն բառերից, որոնք հասկանալի են եղել թէ ինչպէս պէտք  
է արտաբերել: Օրինակ է և ի տառերից վտույ չեն գրել, բայց կարդա-  
լիս մենք մեղանից աւելացնում ենք, ալսինքն առանց նրան էլ հալի հանկի  
ենք կարդում, ինչպէս էլի, էլակ, էլութիւն, լիա կամ ինա՝ լիդիակ, Անա-  
նիեա, Խտալիեա, բոլորովին ալնպէս, ինչպէս կարդում ենք նույնի, նու-  
վաս, թէպէտ ալնպէս չեն գրած:

Այսպէս ահա եթէ ուում գրելը հակահնչական և անճոռնի ուղղագ-

րութիւն է, նոյնքան հակահնչական և անճոռնի են ուել, ուաւ, ուեց, ուած ձևերը, որովհետև դրած նուէր բառի պէս չեն դառնում ուվել կամ բւել, ալլ լել, ոչ գըր-րու-վել ալլ գըր-ւել, զըր-ւող, ինչպէս գործուումն է գործ-ւում: Ուրեմն կրաւորականը լինելով աշխարհիկ լեզուի սեփականութիւն, հնար ունենը համեմատել կենդանի արտաքերութեան հետ և ալնպէս գրել իսկ կենդանի արտաքերութիւնն է գործվում կամ գործւում, գործւել կամ գործւել, և ոչ գործուում, գործուել:

Բայց, ինչպէս տեսնում էք, ուն զուրս մղելուց լստոյ էլ՝ լուծած չենք լինում միակերպութեան խնդիրը, որովհետև մէջ տեղ մէկ տառի տեղ մնում են երկուսը՝ է և ա, և երկուսն էլ իրաւունք են չարոնում կրաւորականի մէջ բազմելու: Դուրս մղել մէկը կամ միւսը չենք կարող ոչ մի հնչական օրէնքով, որովհետև երկուսն էլ հաւասարազօր և նոյնահնչիւն դրեր են, բոլորովին ալնպէս, ինչպէս ո և օ տառերը բառամէջերում և մանաւանդ օտար և լատուկ անուններում, ինչպէս գրող, գրող, Սիմոն, Սիմոն, Ֆակոբ, Յակոբ, Մեսրոբ, Մեսրոբ, Թորոս, Թորոս, Լեւոն, Լէօն, և ալլն:

Այստեղ խնդրում եմ ընթերցողիս փոքր ինչ լարել իւր ուշադրութիւնը: Եւ զիտութեամբ մէջ բերի ոն և օն, որովհետև վել և լիւնի նոյնահնչիւն լինելու պատմութիւնը նոյնն է, ինչ որ սիւ և օիւ: Հնչումը օ չու-նենալով, ալլ միտն =, որ սկզբումը գործ է ածւել իբրև ալլ, ո, ու, օ, ու, երբ ալդ տառերը զեւ. չը կալին, բայց երբ ներս բերին հետզհետէ, հինն ու նորը իրար խառնեց, մի և նոյն բառը չորս իրարից տարբեր ուղղագրութիւն ստացաւ, թէև միահնչիւն: Այսպէս Մեսրոբի անունը գրեցին Մեսրաւը, Մեսրովը, Մեսրօբ, Մեսրօբ, գուցէ և Մեսրուը: Վեր կենար Մեսրօբը և տեսնէր, թէ ինչպէս են նախշում իւր պատւական անունը, իւր ալն լանցանքի պատճառով, որ որոշ \* ձայնի համար չլինել էր մի անորոշ = երկտառ: Ելի լաւ է, որ Մեսրօբ բառը մէկ օ ունի և գրում էին միայն չորս ձևով, եթէ երկու օ ունենար՝ կարող էին գրել 16 ձևով, եթէ երեք, ինչպէս է Սօղօմօն բառը, կարող էին գրել մինչև 64 ձևով, թէև Սօղօմօն իմաստունը լաւ կը համարէր մէկ հաս ձևով Սիւլէման գրւել, քան 64 ձևով Սօղօմօն:

Բայց եթէ ալդ հեռաւոր անցիւղը լաւ հրեակալներ, կը տեսնենք որ Մեսրօբի = երկտառը բոլորովին բաւականութիւն էր տալիս մամանակի պահանջին: Հին ժամանակ և հենց այսօր էլ աւ, ու, օ, ու ձայները լծորդ են միմեանից, Թող օրինակ դրած լինէր տաւն, ինչպէս կ'ուզէք կարդացէք, հալերէն դուրս կը դալ, Լարդացէք տօն, տօւն, տուն, տալն, բոլորն էլ հալերէն են: Արարատումն ասում են տուն, 'Արարատ' տօն, Դողթնում տօն (?), և հենց այս բոլորն էլ աղպէս է: Գրեցէք աւրախ և կարդացէք ինչպէս կամենաք: Ասում եմ «ինչպէս կամենաք» և իդուր չեմ ասում: Հնումը գրելը դրողի կամբիցն էր կախւած, իսկ կարդալը՝ կարդացողի: Այս վիճակին և ալս դրութեանը ես իմ հասակումս վերահասու եղալ, Իմ

մանկութեան ժամանակ ուսումը դեռ վաճառքի մէջն էր փակւած։ Ուր որ դնացի, ջոկ տեսակ կարդալ տեսալ։ Ամեն մի գաւառացի իւր բարբառի ձեռքն էր կարդում և թարգմանում։ Եկալ Թիֆլիս, նոյնը տեսալ եկեղեցիներում։ Ժամերգութիւնը և Աւետարանը Թիֆլիսի բարբառի ձեռքն էին կարդում, ինչպէս «Հայրը մեր, վուր երկինս» և այլն։ Աջապէս էր ամեն գաւառում, և ալսօր էլ, չը նալած մեր ուսումնարանների շատութեանը, շատ տեղերում ընթերցմունքը դեռ գաւառական և բարբառային է։ Ստիպեցէք, օրինակ Ղարաբաղի գիւղական քահանային, որ նա արտասանէ թիւն և ոչ թեւն կամ թուն։ Ի դուր չէր ուրեմն Մեսրօրը դրում թեւն և ոչ թիւն, որ վերջին դարու ուղղագրութիւն է։

Այսպէս էր ահա հնումը, դրում էին ալ՝ և կարդում տեսակ տեսակ, ուլ ինչպէս կամենար։ Այլ է ուրեմն նշանագրութիւն և ալ՝ արտաբերութիւն, քանի որ վճռած խնդիր է, որ ամեն մի բարբառ իւր խօսելու ձևին է ենթարկում բառն էլ, տառն էլ և այնպէս արտաբերում։ Պէտք է սակալն մասնաւորը ընդհանուրից զանազանել։ Բոլոր բարբառները ունին մասնաւոր և ընդհանուր չափութիւն։ Սրինակ ոչ մի բարբառում կարելի չէ գտնել երկու ձալնաւոր առանց ձալնակապի։ Այս մի ընդհանուր չափութիւն է և ոչ մասնաւոր։ Ընդհանուր չափութիւն ունի, օրինակ, հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ աւօր, եւոր, ալի, ոլի, գալի, դնալի, հսկալական, տղալական, տնալին։ Այս հիման վերալ ահա, մենք չուենք ու-ա, ու-է, ու-օ, ալւ ևա կամ վա, իսկ սրանից լիւնը աւելի վաղնչական է, քան թէ վելը, որ կարող է մտած լինել կրտսեր թարգմանիչների ժամանակ և նրանց մեծ վարդապետի ասելով սրբացրած։

## Գ.

Բառագրութիւնը, ինչպէս ամեն լեզուի մէջ, նոյնպէս և մեր հին լեզւում դադափարականից ձգտել է. դէպի հնչականը, ընդհանուրից դէպի մասնաւորը, որ համարեա մինչև անհատական քմահաճութեան է հասել։ Պատիւով գրած մի բառ ուլ ինչպէս ուղենար, ալնպէս կ'արտասանէր, բայց երբ ալ՝ դադափարական բառը ընկնում է որոշ հնչիւնների տակ, նորա արտաբերութիւնն էլ ընկնում է գրողի կամքի տակ։ Եթէ գրողը մշեցի է, անշուշտ մշեցու արտաբերութեամբ կը հնչիւնադրէ, եթէ զարաբաղցի՝ զարաբաղի իսկ բառն էլ՝ եթէ սովորական և ընդհանուրին հասկանալի մի բառ է, ամեն տեղ պէտք է ծումուի, իսկ եթէ անհասկանալի, օտար և խրթին, նա դեռ կարող է անփոփոխ մնալ։ Եթէ խոր ուշ դարձնենք մեր գրող լեզուի ուղղագրութեան վերալ, մանաւանդ լծորդ համարած տառերի վերալ, մենք կը տեսնենք, որ մեր մատենագրութիւնը չորս գլխաւոր բառագրական շրջանով է անցել։ Այդ շրջաններից ամեն մէկը իւր չափորդից պակաս տառեր է ունեցել։ Ամեն մի չափորդ շրջան ուղե-

ցել է նախորդ շրջանի թերին լրացնել, և թէն չաա բառերում չաջողել է, բայց և չաա բառերի էլ ունքը չինելու տեղ՝ աչքն էլ քօռացրել է: Այդ շրջանները, որոնք չատերի համար խաւար վարադուրով են պատած, ինձ համար բաւորովին լուսաւոր և պալծառ են: Եթէ ոչ ուրիշների, գոնէ ինքս ինձ համար պարզիկ եմ մի քանի բան, որոնք չաա կարևոր են մեր ուղղագրութեան խնդիրը պարզաբանելու համար: Որինակ ևս հաստատ հաստացած եմ, որ Մեսրօրի հնարած գրերն են ը, ո, ծ, ձ, ու, ց: Սորա հաստաա և անհերքելի ապացոյցն այն է. որ միայն այս ձայներն են, որ չը կան Մեսրօբին լալանի եղած լեզուներում և գրերում: Եղած բանը չեն հնարել կամ գտել, ալ չ'եղածը: Բանի որ Մեսրօբը քաջ պարսկագէտ և ասորագէտ էր, միթէ կարելի էր, որ նա ալը կամ եչ գտնելու կարօտութիւն ունենար: Այդ չէր լինել գիւտ, ալ փոխառութիւն: Ես չեմ զարմանում, որ Միթարեանք այս մասին պարզ գաղափար չ'ունեն, որովհետեւ զրանք Մեսրօբեան գրերը հնչում են արաբերէնի նման. բայց զարմանալի է, որ գիտնական էմինը անպիսի տառեր է վերագրում Մեսրօբին, որոնք կան թէ պարսկերէնում և թէ ասորերէնում: Մեսրօբը լուսական տառերից ոչ մէկ հատ չի վերցրել: Նա լրացրեց արդէն եղած Դանիէլեան գրերը, որ ասորապարսկական ծագումն ունէին, իւր գտած եօթը գրերով: Սորա ապացոյցն այն է, որ եթէ Մեսրօբը չունաց տառերից վերցնէր իւր ալբուբենը, չէր կարող նրանց երկու օ-երից մէկն ու մէկը չը վերցնել, քանի որ իւր երկտառ աւ-ին չորս ու հինգ պաշտօն էր տալիս մէկ օ չունենալու պատճառով: Եթէ նա չունական տառերից օգուտ քաղած չէ, ինչպէս վկայում է և ժամանակակից պատմութիւնը, ապա ուրեմն վ, է, ի, է գրերը, որոնք զուտ չունական են, Մեսրօբը չէ մտցրած: Շատ նշաններ կան մեր հին լեզուի ուղղագրութեան մէջ, որ ալ տառերը չ'եղած՝ արդէն կազմակերպւած գրականութիւն է եղել հին ուղղագրութեամբ, որից չաա բառեր են անցել չաջորդ շրջաններին և մինչև մեր օրերը հասել: Գաջ հալկաբանները եթէ իրանց սովորական նախապաշարմունքից ազատ լինէին և փոքր ինչ լեզագրական բնագոյնն ունենան, կը նշմարեն, որ մեր լեզուի մէջ ոչ թէ երկու, ալ երեք է կալ, թէն գրերը միայն երկուսն են: Շատ բառեր կարելի է գտնել թէ հայերէն և թէ մանաւանդ օտար (օտար բառերն աւելի են պահպանում իրանց հին ուղղագրութիւնը) որոնցում կը տեսնեն, որ մեր եչը եղել է և՛ երկբարբառ եչ, և՛ կիսաձայնաւոր յ, և՛ պարզ ու նուրբ է, և՛ հասա է, և՛ պարզ է, որ ասել է՝ հինգ ձայնի նշանագիր է եղել: Դերանուն եւ-ը, եչը և բալօժանդակ եմ, ել, ես, ենք, են բառերի եչերը նոյնանչիւն չեն: Դերանուն մէջ եչը երկբարբառ է, ես բալօժանդակների մէջ նոյն է, ինչ որ բառամէջերում, ոչ հաստ է, և ոչ էլ երկբարբառ, ալ պարզ և նուրբ է, ինչպէս գրել, որ չէ գրել և ոչ էլ գրել, ալ պարզ գրել, Բալօժանդակ են նոյնպէս՝ պարզ եչ է և ոչ հաստ է: Թէ ալը են վերջնամուտ է, մինք տեսնում ենք ալը մեր լալերի



միտքն ու գաղափարը ըմբռնելով, իսկ եթէ ալգ գրածը նորա բերան գիտցած աղօթքներէր կամ երգերից մէկն է, առաւել հեշտութեամբ կը կարգալ: Հնումը թէպէտ գրում էին պակաս տառերով, պատիւով, բայց գործը զիւրացնող զանազան նշաններ ունէին: Մետրօքն ուղեղնալով գրագիտութիւնը վաճառից դուրս բերել և ժողովրդի մէջ ընդհանրացնել, այս պատճառով նա չը բաւականացաւ Դանեէլեան գրերով, եթէ ոչ՝ ալնքաճն էլ բաւական էր վաճառելին, և ուրքան դժւար և խորհրդաւոր՝ ալնքան լաւ, ժողովրդի աչքումն աւելի վսեմ կը լինէր և սքանչելի իբրեւ մի ծածկազրութիւն և մեհենական ընդու, անհաս հասարակ մահկանացուներին:

Ինչ ասել կուզի, որ պակաս տառերով գրած բառերը ամենքը միակերպ չէին կարդում, ալ տեսակ տեսակ, և մենք այսօր սխալ կարդալու շնորհիւ բաւական շատ սխալ բառեր ունենք: Դրանց մէկն էլ հէնդ մեր առարկային է վերաբերում, ալն է լիւնին: Առաջ ետ կամ իւ գրելու տեղ գրում էին եւ, որ թէ եւ էր և թէ ետ: Ուրեմն հնումը չէին կարող գրել լիւն, ալ՝ լեւն: Մենք հիմա կարող ենք նուն զիմորոշ օդ համարել, և տեղը կը մնալ լեւ, որ իւր քնական և հնչական անունն է, Բայց կասէք՝ ի՞նչպէս կարելի է, որ լեւը լիւն դառնալ: Ինչո՞ւ չէք ասում, թէ ինչպէս կարելի է, որ լեւնը հիւն դառնալ, և հիւննը լեւանդ: Այս ասացէք, թէ ինչպէս է եղել, որ անագին երկաթաղիւր լիւնից չինել ևն մի սրա փշիկ, իսկ վելի պոչը երկրացրել և չինել մի գիսաւոր, որից շատերը վախենալով՝ նորա անունն են վել գրել: Ունիթօռներն ինչ կարող էին խմանալ, թէ ինչ տարբերութիւն կալ, և և տառերի մէջ, քանի որ դեւ նրանցից առաջ ներսէս շնորհալու գրածներն մէջ տեսնում էին նվազ, նվաստ և ոմանց ոչ հետեւալ գրչաց գրել ՚ի թվին, թվական, վարձատվութիւն» (Վեր. Բագր. եր. 646):

Մեր բոլոր քերականներէր միայն Հ. Բաղրատունին է հասկացել, ալն էլ կիսով չափ միայն, որ վել և լեւն նորահնչիւն դրեր են, իր ասելով թէ՝ «...և ու իբր երկբարբառ վարեալ է, և և ունի աստ զգործ լիւնին ՚ի ու, զոր չմարթէր դնել առ ոչին, զի մի լինեցի ու...»

Ասում եմ կիսով չափ է հասկացել, որովհետեւ այս բանն ասելուց չեսող իսկոյն զղուշացնում է, որ ալղպիսի տեղերում վել վելի նման չը հնչեն, ալ լիւնի նման... Հիմա եկ ու հասկացիր, թէ ալգ ինչ հնչական տարբերութիւն է: Բարենդի հալրիկը ենթադրել է, թէ քանի որ երկու առանձին գրեր են, ուրեմն երկու առանձին հնչիւն էլ պէտք է ունենան: Բայց եթէ գլխի ընկնէր, որ իւր ու երկբարբառ առանդածը ոչ ալ ինչ է, եթէ ոչ ու, խորհուրդ չէր տալ զիտնոց որ եկամուտ ալլաղգական օի տեղ նախնեաց «- երկտաքը կրկին լարուցանել, ալլ աւելի խորհուրդ կը տար «զղատապարտ խափանեալ գրութիւնն և, վերստին լարուցանել և զալն վարել փոխանակ եկամուտ ալլաղգականին և, մանաւանդ ինքն իսկ մի ալ տեղ ասում է. «Միայնակ պիտառութիւն (գործածութիւն) - գրողդ

խափանեալ է առ ի տեսնողի և առ մեկը», որ ասելէ հնումը լիւնը գործ էր ածուում միայնակ, առանց ուրի, և ալն էլ ոչ միայն վախ, ալ և մի քանի ուրիշ տառի տեղ, ինչպէս պարսից լուր:

Դ.

Ներկայումս մեր բանակիրները իրանց մայրենի լեզուով թոթովում են տհաս երեխալի նման, երբ դեռ նոր է լեզուն բացուում և ասում է տունի, շունի, գոռի, Մերոնք էլ երեխալի նման ամեն իրանց քահաճ քերականութիւնը, գրում են օրինակ՝ գինի-ի, կատու-ի, գառ-ի, Բաւա-կան է, որ մէկ երկու սեռական գիտեն է վերջաւորութեամբ, բոլորն էլ նրանց են նմանեցնում: Իսկ մեր քերականները իրանցից մի նոր բան չեն ասում, ալ ալն միայն, ինչ որ իրանցից ասաջ հաղար անգամ ասուել է և ամեն անգամ էլ նորանոր սխալներով: Սակայն ես սրանում մի վատ բան չեմ գտնում: Սա չալոնի ապացոյց է, որ մեր դրական լեզուն իւր մանկական հասակի մէջն է, և շատ խակամիտ պէտք է լինի մէկը, եթէ ենթադրէ, որ իւր լեզուն կատարեալ է: Կատարեալը մի իզէալ է. որին կարող ենք ձգտել և մօտենալ: Բայց երբէք չը հասնել: Ինչ է ալսօր իմ ջանքը, եթէ ոչ մի չնչին ձգտումն միայն, և ալն բնական ձգտումն դէպի կատարեալն: Այսպիսի ջանքը պէտք է խրախուսել, քաջալերել, և ոչ թէ հալածել: Փառք Աստուծոյ, միջին դարերում չենք ապրում, ալ տառնին. ներորդ դարու վերջերում, երբ ամենայն ինչ կատարելագործութեան է դիմում հսկալական քալերով և ոչ կրիալի, Նախանձոտ մարդիկ տամարդութիւն ունին հրատարակելու, որ իբր թէ ես մի նորամուծութիւն եմ ուզում ընդհանրացնել, մինչդեռ իմ բոլոր ջանքն է քահաճ ուղղագրութեան առաջն առնել, ցոյց տալով, ըստ իմ կարողութեան, մեր լեզուի հնչական օրէնքները և պատմական կերպարանափոխութիւնը: Պաշտպանելով լիւնը ըննգէմ վեւի, դրանով կարող ենք վեւի հոսանքի առաջըն առնել, որ իրաւունք չունի լիւնին սեփականացրած տեղերը գրաւելու: Մեր նախնիք վեր գրել են միայն բառասկզբներում և մէկ էլ ուրից չեսող, ուրիշ տեղեր ալ տառը մտնելու իրաւունքը ունեցած չէ: Մեր նախնիք Մեսրօբից ոկսւած գրել են աւ, եւ, իւ, ըւ, աւ, լե, լէ, լը, լի, լո, լօ, լու, և ոչ երբէք եվ, ալ, իվ կամ վա, վե, և ալն: Ասել է թէ վեւը չեն շարժել իրան լատկացրած տեղից, չօղակապ չեն շինել, դատափոխութեան գործում չեն խառնել, իսկ լիւն էլ չեն գործ դրել բառասկզբներում, և հենց սորա համար է, որ Ն. Շնորհալին ասում է.

Վեւն վարք՝ ասէ՝ պիղծ, անառակ,

Տեառն կամաց է լուծ ներհակ,

Իլւնն լօղական է միայն տառ,

Բայց զոր լօղէ, քեզ խրատ առ:

Ուղում է ասել, վեւր կը գրին բառասկզբներում, ինչպէս բառս վարք, իսկ լիւնը բառամէջներում, իրեն լօղակապ, ինչպէս գործ-ւում, ուր դարձնում ձեւերը կայուն է միմեանց հետ: Ոչ մի վն գրող գործվում և գործ-ւում ձեւերը աարբեր ձայնով կարողալ կարող չէ. ուրևին եթէ վն գրողի նպատակը միայն հնչական է, գործւում ձեւը բոլորովին հասցնում է նրան իւր նպատակին, և դեռ մի բանով էլ աւելի, — ազգայն գրելով՝ նա մոռ-րիմ կը լինի մնացած իւր նախնեաց ուղղագրութեանը: Ու գրողները նունպէս ոչինչ չեն կորցնում և գրելով, ալ միայն ու են ուղում, որ նախ-նական ձև չէ, ալ վերջնամուտ և ալն էլ ունիթօռական, Վմահանու-թիւնը միայն կարող է հակառակ երթալ լեզուի ալս օրէնքին, որ թէ բնական է և թի պատմական, և՛ հնչական իղանակին է մտերիմ մնում, և՛ նախնեաց ուղղագրութեանը:

Շատերն արդէն ոկսկիլ են բալի ներկայ ժամանակում և գրել: Ներ-կայով ապրում են միայն վարբենի և կիսակիրթ ազգերն ու անհատները. իսկ լուսամիտ անձինք ոչ միայն ներկայի հետ ունին նաև անցեալ և ապագա, ալ և ապագայ ներկայ էլ ունին և ապագան ամենամեծ է ան-ցեալից. իրանք իրանց պատասխանատու են համարում ոչ անցեալի, ալ ապագայի առջև, ծառայում են ոչ թէ անցեալին, ալ ապագային: Ամեն լուսամիտ անձն անցեալից ստացած հում նիւթը հում էլ պահ չի տալիս ապագային, ալ ոչակած, շահեցրած: Եթէ աչսպէս է, գոնէ մի տեսակ աչքով պէտք է նայել բոլոր ժամանակների վերալ, եթէ ոչ կենցաղաւ-րութեան մէջ, գոնէ լեզուի մէջ, քերականութեան ժամանակների մէջ: Կամ պէտք է լետ երթանք դէպի անցեալը և ձեր ուուն կրկին պարզապ-նենք ներկայի գլխին, և կամ ամենաչն տեղ պէտք է դնէք ևր և ոչ ու: Սրանով մենք վերջացնում ենք կրաւորական խնդիրը: Եթէ էլի մութ բան կալ մնացած, հետեւալ լօղածներում կը պարզուի:

(Կը շարունակւի)